ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱՀԱՐԹԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Օրենքի խնդիրները

1. Սույն օրենքը սահմանում է ֆինանսական համահարթեցման հասկացությունը, սկզբունքները, համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների (այսուհետ՝ դոտացիաներ) հաշվարկման և հատկացման կարգերը:

Հոդված 2. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) **ֆինանսական համահարթեցում**՝ համայնքների ներդաշնակ զարգացմանը նպաստելու, ինչպես նաև բոլոր համայնքներում նվազագույն մակարդակի ծախսեր կատարելու հնարավորություն ստեղծելու համար տեղական ինքնակառավարման մարմիններին օրենքով վերապահված սեփական լիազորությունների իրականացման համար համայնքների ֆինանսական հնարավորությունների միջև առկա տարբերությունների նվազեցում.

2) **համայնքի բյուջետային ապահովվածության գործակից**՝ համայնքի եկամտային կարողության և ծախսային կարիքի կարգավորիչ գործակիցների հարաբերություն.

3) **համայնքի եկամտային կարողության գործակից**՝ համայնքի բնակչության մեկ շնչին ընկնող եկամտային կարողության հարաբերություն Հայաստանի Հանրապետության համանման ցուցանիշին.

4) **համայնքի եկամտային կարողություն**՝ համայնքի բյուջեին օրենքով ամրագրված և սույն օրենքի շրջանակներում նախատեսված հողի հարկի, գույքահարկի, մասհանվող հարկերի, պետական տուրքերի և օրենքի «ա» մասով հատկացվող դոտացիաների հանրագումարը.

5) **համայնքի ծախսային կարիքի կարգավորիչ գործակից**՝ տվյալ համայնքի սեփական լիազորությունների իրականացման ծախսերի վրա ազդեցություն ունեցող՝ սույն օրենքով սահմանված ծախսային գործոնների արժեքների հանրագումարը.

6) **ծախսային գործոններ**՝ համայնքներին օրենքով վերապահված սեփական լիազորությունների իրականացման վրա ազդեցություն ունեցող և տվյալ համայնքի առանձնահատկությունները բնութագրող գործոնը: Սույն օրենքում ընդգրկված են հետևյալ ծախսային գործոնները.

1) մասշտաբի գործոն.

2) տրանսպորտային մատչելիության գործոն.

3) համայնքի բարձրադիրության գործոն.

4) համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի քանակի գործոն.

5) բնակչության տարիքային կառուցվածքի գործոն.

7) **համահարթեցման սահմանային մակարդակ՝** այս ցուցանիշի արժեքով է պայմանավորված սույն օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված դոտացիաների «բ» մասի՝ ըստ համայնքների հատկացման չափը, ինչպես նաև նույն մասով համայնքների դոտացիա ստանալու կամ չստանալու հնարավորությունը.

8) սույն օրենքի իմաստով՝ հաշվարկվող տարին այն տարին է, որի համար հաշվարկվում են դոտացիաները:

Սույն օրենքի իմաստով՝ դոտացիաների գումարները հաշվարկելու համար պետական լիազոր մարմինն է (այսուհետ՝ պետական լիազոր մարմին) տարածքային կառավարման և զարգացման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը.

Հոդված 3. Ֆինանսական համահարթեցման սկզբունքները

1. Ֆինանսական համահարթեցման սկզբունքներն են՝

1) համայնքների ֆինանսական հնարավորությունների միջև առկա անհամաչափության մեղմացումը.

2) պետական բյուջեից համայնքներին տրամադրվող դոտացիաների անհատույց և ոչ նպատակային լինելը.

3) համայնքների լիազորությունների իրականացման և ֆինանսական միջոցների օգտագործման ազատության և ինքնուրույնության պահպանումը.

4) պետական բյուջեից տրամադրվող դոտացիաների ընդհանուր գումարի նվազագույն չափի՝ օրենքով սահմանումը.

5) ըստ առանձին համայնքների՝ սույն օրենքով սահմանված կարգով պետական բյուջեից համայնքներին տրամադրող դոտացիաների գումարների՝ «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով հաստատումը:

Հոդված 4. Դոտացիաների ձևավորման աղբյուրը և դոտացիա ստացող համայնքները

1. Դոտացիաների ֆինանսական միջոցները ձևավորվում են պետական բյուջեի միջոցներից և հանդիսանում են համայնքների բյուջեներին հատկացվող ոչ նպատակային պետական ընթացիկ տրանսֆերտներ:

2. Դոտացիաներ ստացող համայնքների համար պահպանվում են սեփական պատասխանատվությամբ գործելու իրավունքը և այդ ֆինանսական միջոցների օգտագործման ազատությունը:

3. Սույն օրենքով սահմանված ֆինանսական միջոցների բաշխման կարգի հիման վրա դոտացիաներ չեն կարող ստանալ այն համայնքները, որոնք չեն բավարարում սույն օրենքի 6–րդ և (կամ) 7–րդ հոդվածներով նախատեսված պահանջները:

Հոդված 5. Դոտացիաների կառուցվածքը

1. Դոտացիաները բաղկացած են երկու մասից՝ «ա» և «բ»: Այդ մասերից յուրաքանչյուրը հաշվարկվում է ըստ առանձին համայնքների:

«ա» մասով դոտացիաները հաշվարկվում են ըստ համայնքների բնակչության քանակի՝ $Դ^{Ա}$,

«բ» մասով դոտացիաները հաշվարկվում են ըստ համայնքների բյուջետային ապահովվածության գործակցի՝ $Դ^{Բ}$:

Հոդված 6. Դոտացիաների «ա» մասի հաշվարկման կարգը

1. «ա» մասով դոտացիաներ հատկացվում են այն համայնքներին, որոնց բնակչության քանակը չի գերազանցում 3500-ը:

2. «ա» մասով յուրաքանչյուր համայնքին դոտացիաները հատկացվում են հավասարաչափ գումարով, որի չափը սահմանվում է տվյալ տարվա «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

3. Համայնքի բնակչության քանակը տվյալ համայնքի տարածքում հաշվառված բնակչության թիվն է հաշվարկվող տարվան նախորդող տարվա տարեսկզբի (հունվարի 1-ի) դրությամբ:

4. «ա» մասով հատկացվող դոտացիաների ընդհանուր գումարը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$Դ^{Ա} = ՀԹ^{Ա} \times Ա^{Դ}$$, որտեղ՝

$Դ^{Ա}$-ն - «ա» մասով հատկացվող դոտացիաների ընդհանուր գումարն է,

$ՀԹ^{Ա}$-ն - «ա» մասով դոտացիա ստացող համայնքների ընդհանուր թիվն է,

$Ա^{Դ}$-ն - «ա» մասով մեկ համայնքին հատկացվող դոտացիայի գումարի չափն է:

5. Համայնքի դոտացիա ստանալը «ա» մասով չի բացառում նույն համայնքի դոտացիա ստանալը նաև «բ» մասով: «ա» մասով հատկացվող դոտացիաների միջոցները ներառվում են այդ միջոցները ստացող համայնքների եկամտային կարողության գործակցի հաշվարկում՝ որպես լրացուցիչ եկամուտ:

Հոդված 7. Դոտացիաների «բ» մասի հաշվարկման կարգը

1. «բ» մասով դոտացիաներ ստանում են բոլոր այն համայնքները, որոնց բյուջետային ապահովվածության գործակիցը փոքր է սույն օրենքով սահմանված՝ համահարթեցման սահմանային մակարդակի արժեքից:

2. «բ» մասով հատկացվող դոտացիաների ընդհանուր գումարը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$Դ^{Բ} = Դ - Դ^{Ա}$$, որտեղ՝

$Դ^{Բ}$-ն - «բ» մասով հատկացվող դոտացիաների ընդհանուր գումարն է,

$Դ$-ն - դոտացիաների ընդհանուր գումարն է,

$Դ^{Ա}$-ն - «ա» մասով հատկացվող դոտացիաների ընդհանուր գումարն է:

3. Սույն օրենքով սահմանվում է համահարթեցման սահմանային մակարդակի այնպիսի արժեք, որի դեպքում «բ» մասով հատկացվող դոտացիայի ֆինանսական միջոցները կարող են լրացնել դոտացիա ստացող համայնքների բյուջետային ապահովվածության և համահարթեցման սահմանային մակարդակի միջև եղած տարբերության 75 տոկոսը:

4. Համայնքին «բ» մասով հատկացվող դոտացիան հավասար է տվյալ համայնքի բյուջետային ապահովվածության և համահարթեցման սահմանային մակարդակի միջև եղած տարբերության 75 տոկոսին:

5. Համայնքի բյուջետային ապահովվածության և համահարթեցման սահմանային մակարդակի միջև եղած տարբերության գումարը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$ԳՈՒՄ_i^{ՀՍՄ} = (ՀՍՄ - ԲԱԳ_i) \times Բ_i \times ԾԿԳ_i \times ԵԿ_{միջին},$$ որտեղ՝

$ԳՈՒՄ_i^{ՀՍՄ}$-ը - i-րդ համայնքի բյուջետային ապահովվածության գործակցի և համահարթեցման սահմանային մակարդակի միջև եղած տարբերությունը լրացնելու համար անհրաժեշտ գումարի չափն է,

$ՀՍՄ$-ը - համահարթեցման սահմանային մակարդակն է,

$ԾԿԳ_i$-ն - i-րդ համայնքի ծախսային կարիքի կարգավորիչ գործակիցն է,

$Բ_i$- ն - i-րդ համայնքի բնակչության թիվն է,

$ԵԿ_{միջին}$-ը - համայնքների միջին եկամտային կարողությունն է,

$$ԵԿ_{միջին}\text{-ը} = \sum ԵԿ_i / Բ_{ՀՀ},$$ որտեղ՝

$ԵԿ_i$-ն - i-րդ համայնքի եկամտային կարողությունն է,

$Բ_{ՀՀ}$-ն - բոլոր համայնքների բնակչության թվի հանրագումարն է (Հայաստանի Հանրապետության բնակչության թիվը):

6. Համայնքներին «բ» մասով հատկացվող դոտացիաները հաշվարկվում են հետևյալ բանաձևով.

$$Դ_i^{Բ} = 0,75 \times ԳՈՒՄ_i^{ՀՍՄ},$$ որտեղ՝

$Դ_i^{Բ}$-ն - i-րդ համայնքին «բ» մասով հատկացվող դոտացիայի գումարն է:

Հոդված 8. Համայնքի բյուջետային ապահովվածության գործակցի հաշվարկման կարգը

1. Համայնքի բյուջետային ապահովվածության գործակիցը համայնքի եկամտային կարողության և ծախսային կարիքի կարգավորիչ գործակիցների հարաբերությունն է:

2. Համայնքի բյուջետային ապահովվածության գործակիցը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

ԲԱԳ$_i$ = ԵԿԳ$_i$ / ԾԿԳ$_i$, որտեղ՝

ԲԱԳ$_i$-ն - i-րդ համայնքի բյուջետային ապահովվածության գործակիցն է,
ԵԿԳ$_i$-ն - i-րդ համայնքի եկամտային կարողության գործակիցն է,
ԾԿԳ$_i$-ն - i-րդ համայնքի ծախսային կարիքի կարգավորիչ գործակիցն է:

Հոդված 9. Համայնքի եկամտային կարողության գործակցի հաշվարկման կարգը

1. Համայնքի եկամտային կարողության գործակիցը տվյալ համայնքի բնակչության մեկ շնչին ընկնող՝ համայնքների բյուջեներին օրենքով ամրագրված տվյալ համայնքի հարկային եկամուտների, պետական տուրքերի և սույն օրենքով նախատեսված՝ «ա» մասով հատկացվող դոտացիաների հանրագումարն է՝ հարաբերած միջին հանրապետական համանման ցուցանիշին:

2. Համայնքի եկամտային կարողությունը տվյալ համայնքի բյուջեին օրենքով ամրագրված և սույն օրենքի շրջանակներում նախատեսված հետևյալ եկամտատեսակների հանրագումարն է.

1) հողի հարկ,

2) գույքահարկ.

Համայնքի հողի հարկի և գույքահարկի հաշվարկային գումարի ցուցանիշները յուրաքանչյուր համայնքի գծով օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված՝ հաշվարկվող տարվան նախորդող երկրորդ տարում այդ համայնքի բյուջե վճարման ենթակա հողի հարկի և գույքահարկի տարեկան գումարներն են (առանց հողի հարկի և գույքահարկի գծով՝ հաշվարկվող տարվան նախորդող երկրորդ տարվա տարեսկզբի (հունվարի 1-ի) դրությամբ առկա չմարված ապառքների, տույժերի և տուգանքների, ինչպես նաև հաշվարկվող տարվան նախորդող երկրորդ տարվա ընթացքում հաշվարկված տույժերի և տուգանքների գումարների), ավելացված Հայաստանի Հանրապետության օրենքներով և համայնքների ավագանիների ընդունած որոշումներով ֆիզիկական անձանց և կազմակերպություններին հողի հարկի և գույքահարկի գծով արտոնությունների տրամադրման հետևանքով այդ հարկերի գծով համայնքների հաշվարկային տարվան նախորդող երկրորդ տարվա բյուջեներում եկամուտների կորուստների գումարները.

3) մասհանվող հարկեր.

Մասհանվող հարկերի հաշվարկային գումարի ցուցանիշները յուրաքանչյուր համայնքի գծով հաշվարկվող տարվան նախորդող երկրորդ տարում այդ համայնքի բյուջե փաստացի վճարված մասհանվող հարկերի տարեկան գումարներն են (մասհանվող հարկերի տեսակները և մասհանման տոկոսաչափը սահմանվում են տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով).

4) պետական տուրքեր.

Պետական տուրքերի հաշվարկային գումարի ցուցանիշները յուրաքանչյուր համայնքի գծով հաշվարկվող տարվան նախորդող երկրորդ տարում այդ համայնքի բյուջե փաստացի վճարված պետական տուրքերի տարեկան գումարներն են.

5) «ա» մասով հատկացվող դոտացիա.

«ա» մասով հատկացող դոտացիայի հաշվարկային գումարի ցուցանիշը յուրաքանչյուր համայնքի գծով հաշվարկվող տարում սույն օրենքով նախատեսված կարգով հաշվարկվող, «ա» մասով հատկացվող դոտացիայի գումարն է:

3. Համայնքի եկամտային կարողությունը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$ԵԿ_i = ՀՀ_i + ԳՀ_i + ՄՀ_i + ՊՏ_i + Ա^{դ},$$ որտեղ՝

$ՀՀ_i$-ն - i-րդ համայնքի հողի հարկի գումարն է,

$ԳՀ_i$-ն - i-րդ համայնքի գույքահարկի գումարն է,

$ՄՀ_i$-ն - i-րդ համայնքի մասհանվող հարկերն են,

$ՊՏ_i$-ն - i-րդ համայնքի պետական տուրքերն են,

$Ա^{դ}$-ն - «ա» մասով մեկ համայնքին հատկացվող դոտացիայի գումարի չափն է:

4. Համայնքի եկամտային կարողության գործակիցը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$ԵԿԳ_i = (ԵԿ_i / Բ_i) / (ԵԿ_{հհ} / Բ_{հհ}),$$ որտեղ՝

$ԵԿԳ_i$-ն - i-րդ համայնքի եկամտային կարողության գործակիցն է,

$ԵԿ_i$-ն - i-րդ համայնքի եկամտային կարողությունն է,

$Բ_i$-ն - i-րդ համայնքի բնակչության թիվն է,

$ԵԿ_{հհ}$-ն - բոլոր համայնքների եկամտային կարողության հանրագումարն է,

$Բ_{հհ}$-ն - բոլոր համայնքների բնակչության թվի հանրագումարն է (Հայաստանի Հանրապետության բնակչության թիվը):

Հոդված 10. Համայնքի ծախսային կարիքի կարգավորիչ գործակիցը

1. Համայնքի ծախսային կարիքի կարգավորիչ գործակիցը (այսուհետ՝ ծախսային գործակից) տվյալ համայնքի սեփական լիազորությունների իրականացման ծախսերի վրա ազդեցություն ունեցող՝ սույն օրենքով սահմանված ծախսային գործոնների արժեքների հանրագումարն է:

2. Ծախսային գործակիցն ուղղակիորեն կախված է՝

1) կիրառվող ծախսային գործոնների տեսակից և դրանց արժեքից.

2) համայնքի ծախսային գործակցում յուրաքանչյուր ծախսային գործոնի տեսակարար կշռից (բաժնեմասից):

3. Համայնքների առանձնահատկություններից ելնելով՝ սույն օրենքում կիրառվում են ծախսային գործակցի վրա ազդեցություն ունեցող այնպիսի ծախսային գործոններ, որոնք հիմնականում ընդհանուր են և ուղղակիորեն ազդում են համայնքային լիազորությունների իրականացման ծախսերի վրա, և դրանց վերաբերյալ տվյալները չափելի, մատչելի և հավաստի են:

4. Համայնքի ծախսային գործակիցը հաշվարկվում է սույն օրենքով սահմանված հետևյալ ծախսային գործոններով և իրենց համապատասխան տեսակարար կշիռներով.

1) մասշտաբի ծախսային գործոն՝ $Կ^{ՄԳ}$ - 30 տոկոս.

2) տրանսպորտային մատչելիության ծախսային գործոն՝ $Կ^{ՏՄԳ}$ - 20 տոկոս.

3) համայնքի բարձրադիրության ծախսային գործոն ՝ $Կ^{ԲԳ}$ - 15 տոկոս.

4) համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի քանակի ծախսային գործոն՝ $Կ^{ԲՔԳ}$ - 25 տոկոս.

5) բնակչության տարիքային կառուցվածքի ծախսային գործոն՝ $Կ^{ԲՏԿԳ}$ - 10 տոկոս:

Հոդված 11. Մասշտաբի ծախսային գործոնի հաշվարկման կարգը

1. Մասշտաբի ծախսային գործոնը համայնքի սեփական լիազորությունների իրականացման ծախսերի վրա համայնքի բնակչության քանակի ազդեցությունն է:

2. Մասշտաբի ծախսային գործոնի արժեքը հաշվարկվում է ըստ համայնքի բնակչության քանակի՝ համաձայն հետևյալ սանդղակի.

Բնակչության քանակի միջակայք	$ՄԳ_i$
0-3500 բնակիչ	1.0
3501-5000 բնակիչ	2.8
5001-20000 բնակիչ	2.0
20001-150000 բնակիչ	1.5
150001-ից ավելի բնակիչ	1.0

որտեղ՝

$ՄԳ_i$-ն - i-րդ համայնքի մասշտաբի ծախսային գործոնի արժեքն է:

Հոդված 12. Տրանսպորտային մատչելիության ծախսային գործոնի հաշվարկման կարգը

1. Տրանսպորտային մատչելիության ծախսային գործոնը համայնքի սեփական լիազորությունների իրականացման ծախսերի վրա նախկին շրջկենտրոնից, մարզկենտրոնից և Երևանից համայնքի հեռավորության ազդեցությունն է:

2. Տրանսպորտային մատչելիության ծախսային գործոնի արժեքը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$ՏՄԳ_i = 1 + (0,1 \times Հ_i^{Մայր} + 0,3 \times Հ_i^{Մարզ} + 0,6 \times Հ_i^{Շրջ}) / (0,1 \times Հ_{միջ}^{Մայր} + 0,3 \times Հ_{միջ}^{Մարզ} + 0,6 \times Հ_{միջ}^{Շրջ}),$$

որտեղ՝

$ՏՄԳ_i$-ն - i-րդ համայնքի տրանսպորտային մատչելիության ծախսային գործոնի արժեքն է,

$Հ_i^{Մայր}$-ը - i-րդ համայնքի հեռավորությունն է մայրաքաղաքից,

$Հ_i^{Մարզ}$-ը - i-րդ համայնքի հեռավորությունն է մարզկենտրոնից,

$Հ_i^{Շրջ}$-ը - i-րդ համայնքի հեռավորությունն է նախկին շրջկենտրոնից,

$Հ_{միջ}^{Մայր}$-ը - բոլոր համայնքների միջին հեռավորությունն է մայրաքաղաքից,

$$Հ_{միջ}^{Մայր} = \sum_i Հ_i^{Մայր} / ՀԹ_{ՀՀ},$$ որտեղ՝

$\sum_i Հ_i^{Մայր}$-ը - բոլոր համայնքների՝ մայրաքաղաքից ունեցած հեռավորությունների հանրագումարն է,

$ՀԹ_{ՀՀ}$-ն - համայնքների ընդհանուր թիվն է,

$Հ_{միջ}^{Մարզ}$-ը - բոլոր համայնքների միջին հեռավորությունն է իրենց մարզկենտրոնից,

$$Հ_{միջ}^{Մարզ} = \sum_i Հ_i^{Մարզ} / ՀԹ_{ՀՀ},$$ որտեղ՝

$\sum_i Հ_i^{Մարզ}$-ը - բոլոր համայնքների՝ իրենց մարզի մարզկենտրոնից ունեցած հեռավորությունների հանրագումարն է,

$Հ_{միջ}^{Շրջ}$-ը – բոլոր համայնքների միջին հեռավորությունն է իրենց նախկին շրջկենտրոնից,

$$Հ_{միջ}^{Շրջ} = \sum_i Հ_i^{Շրջ} / ՀԹ_{ՀՀ},$$ որտեղ՝

$\sum_i Հ_i^{Շրջ}$-ը - բոլոր համայնքների՝ իրենց նախկին շրջկենտրոնից ունեցած հեռավորությունների հանրագումարն է:

Հոդված 13. Համայնքի բարձրադիրության ծախսային գործոնի հաշվարկման կարգը

1. Համայնքի բարձրադիրության ծախսային գործոնը համայնքի սեփական լիազորությունների իրականացման ծախսերի վրա համայնքի բարձրադիրության ազդեցությունն է:

2. Համայնքի բարձրադիրության ծախսային գործոնի արժեքը հաշվարկվում է ըստ համայնքի բարձրադիրության նիշի՝ համաձայն հետևյալ սանդղակի.

Համայնքի բարձրադիրության նիշի միջակայք	$ԲԳ_i$
մինչև 1700մ	1,0
1700-2000մ	1,1
2000մ -ից ավել	1,25

որտեղ՝

$ԲԳ_i$-ն - i-րդ համայնքի բարձրադիրության ծախսային գործոնի արժեքն է:

3. Համայնքի բարձրադիրության նիշի ցուցանիշը համայնքի կենտրոն հանդիսացող բնակավայրում տեղական ինքնակառավարման մարմինների նստավայրի՝ ծովի մակերևույթից ունեցած բարձրությունն է:

Հոդված 14. Համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի քանակի ծախսային գործոնի հաշվարկման կարգը

1. Համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի քանակի ծախսային գործոնը համայնքի սեփական լիազորությունների իրականացման ծախսերի վրա համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի քանակի ազդեցությունն է:

2. Համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի քանակի ծախսային գործոնի արժեքը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$ԲՔԳ_i = 1 + 0,2(ԲԹ_i - 1)$$, որտեղ՝

$ԲՔԳ_i$-ն - i-րդ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի քանակի ծախսային գործոնի արժեքն է,

$ԲԹ_i$-ն - i-րդ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի թիվն է:

Հոդված 15. Բնակչության տարիքային կառուցվածքի ծախսային գործոնի հաշվարկման կարգը

1. Բնակչության տարիքային կառուցվածքի ծախսային գործոնը համայնքի սեփական լիազորությունների իրականացման ծախսերի վրա համայնքի բնակչության տարիքային կառուցվածքի ազդեցությունն է:

2. Բնակչության տարիքային կառուցվածքի ծախսային գործոնի արժեքը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$ԲՏԿԳ_i = 1 + (Բ_i^{ե} + Բ_i^{ծ}) / Բ_i) / (Բ_{հայ}^{ե} + Բ_{հայ}^{ծ}) / Բ_{հայ}),$$ որտեղ՝

$ԲՏԿԳ_i$-ն - i-րդ համայնքի բնակչության տարիքային կառուցվածքի գործակիցն է,

$Բ_i^{ե}$-ն - i-րդ համայնքի 0-16 տարեկան բնակչության թիվն է,

$Բ_i^{ծ}$-ն - i-րդ համայնքի կենսաթոշակային տարիքի (63 տարեկանից բարձր) բնակչության թիվն է,

$Բ_i$-ն - i-րդ համայնքի բնակչության թիվն է,

$Բ_{հայ}^{ե}$-ն - բոլոր համայնքների 0-16 տարեկան բնակչության թվի հանրագումարն է,

$Բ_{հայ}^{ծ}$-ն - բոլոր համայնքների կենսաթոշակային տարիքի (63 տարեկանից բարձր) բնակչության թվի հանրագումարն է,

$Բ_{հայ}$-ն - բոլոր համայնքների բնակչության թվի հանրագումարն է (Հայաստանի Հանրապետության բնակչության թիվը):

Հոդված 16. Համայնքի ծախսային գործակցի հաշվարկման բանաձևը

1. Համայնքի ծախսային գործակիցը հավասար է մասշտաբի, տրանսպորտային մատչելիության, համայնքի բարձրադիրության, համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի քանակի, բնակչության տարիքային կառուցվածքի ծախսային գործոնների հանրագումարին՝ իրենց համապատասխան տեսակարար կշիռներով:

2. Համայնքի ծախսային գործակցի հաշվարկային արժեքը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$ԾԿԳ_i^{հաշ.} = \sum(Կ^n \times ԾԳ^n_i),$$ որտեղ՝

$ԾԿԳ_i^{հաշ}$-ը - i-րդ համայնքի ծախսային գործակցի հաշվարկային արժեքն է,

$Կ^n$-ը - n - րդ ծախսային գործոնի տեսակարար կշիռն է,

$ԾԳ^n_i$-ը - i-րդ համայնքի n - րդ ծախսային գործոնի արժեքն է:

$$ԾԿԳ_i^{հաշ.} = Կ^{ՄԳ} \times ՄԳ_i + Կ^{ՏՄԳ} \times ՏՄԳ_i + Կ^{ԲԳ} \times ԲԳ_i + Կ^{ԲՔԳ} \times ԲՔԳ_i + Կ^{ԲՏԿԳ} \times ԲՏԿԳ_i$$

$$ԾԿԳ_i^{հաշ.} = 0.3 \times ՄԳ_i + 0.2 \times ՏՄԳ_i + 0.15 \times ԲԳ_i + 0.25 \times ԲՔԳ_i + 0.1 \times ԲՏԿԳ_i$$

3. Համայնքի ծախսային գործակիցը համայնքի ծախսային գործակցի հաշվարկային արժեքի նորմավորված ցուցանիշն է: Համայնքի ծախսային գործակցի հաշվարկային արժեքը նորմավորվում է հետևյալ բանաձևով.

$$ԾԿԳ_i = ԾԿԳ_i^{հաշ.} / ԾԿԳ^{միջին}, \text{ որտեղ՝}$$

$ԾԿԳ_i$-ն - i-րդ համայնքի ծախսային գործակցի նորմավորված ցուցանիշն է (համայնքի ծախսային գործակիցը),

$ԾԿԳ^{միջին}$-ը - բոլոր համայնքների ծախսային գործակիցների միջին կշռված ցուցանիշն է,

$$ԾԿԳ^{միջին}\text{-ը} = \sum (ԾԿԳ_i^{հաշ} \times Բ_i) / Բ$$ «

Հոդված 17. Դոտացիաների հաշվարկների կատարումը և հատկացումը

1. Դոտացիաների հաշվարկման մեջ օգտագործվող՝ համայնքներին վերաբերող տվյալների աղբյուրներն են՝

1) ծախսային գործակիցների տվյալների համար՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը, Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում պետական լիազոր մարմինը, Հայաստանի Հանրապետության մարզպետարանները և Հայաստանի Հանրապետության համայնքները.

2) եկամտային կարողության տվյալների համար՝ համայնքներն ու հարկային մարմինը՝ յուրաքանչյուրն իր մասով:

2. Համայնքներին հատկացվող դոտացիաների գումարները հաստատվում են յուրաքանչյուր տարվա «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

3. Պետական լիազոր մարմինը բյուջետային օրենսդրությամբ սահմանված ժամկետներում իր պաշտոնական կայքէջում հրապարակում և տարածքային կառավարման մարմինների միջոցով տեղական ինքնակառավարման մարմիններին տրամադրում է պետական մարմինների կողմից հաշվառվող՝ դոտացիաների գումարների հաշվարկներում կիրառված ելակետային տվյալների ցուցանիշները:

4. Դոտացիաների գումարների հաշվարկման համար անհրաժեշտ ելակետային տվյալները պետական կառավարման լիազոր մարմին ներկայացման, դոտացիաների հաշվարկման և հատկացման բնագավառում պետության և համայնքների միջև առաջացող՝ սույն օրենքով չկարգավորված հարաբերությունները կանոնակարգվում են Հայաստանի Հանրապետության բյուջետային օրենսդրությամբ:

5. Տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց համայնքներին հատկացված դոտացիայի գումարի չափը և հաշվարկներում օգտագործվող ելակետային տվյալների

իսկությունը կարող են վիճարկել Հայաստանի Հանրապետության պետական կառավարման լիազոր մարմնում և (կամ) դատարանում:

6. Համայնքներին դոտացիաները յուրաքանչյուր ամսվա վերջում հավասար չափաբաժիններով հատկացնում է պետական ֆինանսների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը՝ յուրաքանչյուր համայնքի համար բացված գանձապետական հաշվի միջոցով:

Հոդված 18. Անցումային և եզրափակիչ դրույթներ

1. Սույն օրենքի 6-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում և կիրառվում դոտացիաների՝ 2020 թվականի գումարները հաշվարկելու պահից սկսած:

2. 2017, 2018 և 2019 թվականներին «ա» մասով յուրաքանչյուր համայնքին դոտացիաները հատկացվում են՝

1) տվյալ համայնքին 2016 թվականին տրամադրված դոտացիաների փաստացի գումարի չափով (ներառյալ՝ Հայաստանի Հանրապետության օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցման գումարի).

2) 2016-2019 թվականներին ձևավորված բազմաբնակավայր համայնքների՝ «ա» գործոնով նախատեսվող դոտացիայի գումարը հավասար է 2016 թվականի դրությամբ վերջիններիս կազմում ընդգրկված նախկին համայնքների դոտացիաների (ներառյալ՝ Հայաստանի Հանրապետության օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցման գումարի) հանրագումարին:

3. 2017, 2018 և 2019 թվականների համար «ա» մասով հատկացվող դոտացիաների ընդհանուր գումարը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$Դ^{Ա} = Դ^{2016\ փաստացի}$$, որտեղ՝

$Դ^{Ա}$-ն - «ա» մասով հատկացվող դոտացիաների ընդհանուր գումարն է,

$Դ^{2016\ փաստացի}$-ն - 2016 թվականին համայնքների փաստացի հատկացված դոտացիաների (ներառյալ՝ Հայաստանի Հանրապետության օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցման գումարի) ընդհանուր գումարն է:

4. 2017, 2018 և 2019 թվականների համար «բ» մասով հատկացվող համահարթեցման դոտացիաների գումարը հաշվարկելիս համայնքի եկամտային կարողության գործակցի հաշվարկում չի ներառվում «ա» մասով հատկացվող դոտացիաների գումարը: 2017, 2018 և 2019 թվականների համար համայնքի եկամտային կարողությունը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$ԵԿ_i = ՀՀ_i + ԳՀ_i + ՄՀ_i + ՊՏ_i,$$ որտեղ՝

ՀՀ$_i$-ն - i-րդ համայնքի հողի հարկի գումարն է,

ԳՀ$_i$-ն - i-րդ համայնքի գույքահարկի գումարն է,

ՄՀ$_i$-ն - i-րդ համայնքի մասհանվող հարկերն են,

ՊՏ$_i$-ն - i-րդ համայնքի պետական տուրքերն են:

5. Անկախ սույն օրենքով սահմանված դոտացիայի հաշվարկման կարգից՝ 2017 թվականին և հաջորդ տարիներին համայնքներին հատկացվող համահարթեցման դոտացիաները հաշվարկվում և հատկացվում են ոչ պակաս, քան 2016 թվականին փաստացի հատկացված դոտացիաները (ներառյալ՝ Հայաստանի Հանրապետության օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցման գումարը):

6. Ուժը կորցրած ճանաչել 1998 թվականի նոյեմբերի 24-ին ընդունված «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՕ-262 Հայաստանի Հանրապետության օրենքը:

7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: